



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ՉՈՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՈՐՈՇՈՒՄ

Գանգատ թիվ 37981/12

Ամալյա ՂԱՐԻԲՅԱՆՆ ընդդեմ Հայաստանի

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Չորրորդ բաժանմունք),
2022 թվականի ապրիլի 7-ին հանդես գալով Կոմիտեի հետեւյալ կազմով՝

Յոլիեն Շուկինգ [Jolien Schukking]՝ *Նախագահ,*

Արմեն Հարությունյան [Armen Harutyunyan],

Անա Մարիա Գուերա Մարտինս [Ana Maria Guerra Martins]՝ *դատավորներ,*

եւ Վիկտորիա Մարադուդինա [Viktoriya Maradudina]՝ *Բաժանմունքի
քարտուղարի տեղակալի պաշտոնակատար,*

հաշվի առնելով 2012 թվականի հունիսի 16-ին ներկայացված վերոնշյալ
գանգատը,

անցկացնելով խորհրդակցություն, կայացրեց հետեւյալ որոշումը.

ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Դիմումատուն՝ տկն Ամայյա Ղարիբյանը, ծնվել է 1980 թվականին: Նրան ներկայացրել է Երեւանում գործող իրավաբան պրն Տ. Սաֆարյանը:

Կոնվենցիայի 8-րդ եւ 13-րդ հոդվածների համաձայն՝ դիմումատուի անձնական կյանքի եւ նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունքին ենթադրաբար անօրինական միջամտության վերաբերյալ բողոքներն ուղարկվել են Հայաստանի Հանրապետության կառավարություն (Կառավարություն), որը ներկայացրել է բողոքների ընդունելիության եւ դրանք ըստ էության քննելու վերաբերյալ իր դիտարկումները: Դիտարկումներն ուղարկվել են դիմումատուին, որին առաջարկել են ներկայացնել սեփական դիտարկումները: Քարտուղարի նամակին չեն պատասխանել:

2021 թվականի հունվարի 5-ի գրությամբ, պատվիրված նամակով ուղարկելու միջոցով դիմումատուն ծանուցվել է այն մասին, որ իր դիտարկումները ներկայացնելու համար թույլատրված ժամկետը լրացել է 2017 թվականի օգոստոսի 17-ին, եւ որ ժամկետը երկարաձգելու վերաբերյալ միջնորդություն չի ներկայացվել: Դիմումատուի ուշադրությունը հրավիրվել է Կոնվենցիայի 37-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետին, որով նախատեսվում է, որ Դատարանը կարող է գանգատը հանել գործերի ցուցակից, եթե հանգամանքները հանգեցնում են այն եզրակացության, որ դիմումատուն մտադիր չէ հետամուտ լինել իր գանգատին: Դիմումատուի ներկայացուցիչն այդ գրությունն ստացել է 2021 թվականի փետրվարի 17-ին: Այնուամենայնիվ, որեւէ պատասխան չի ստացվել:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

Վերոնշյալի լույսի ներքո, ինչպես նաեւ Կոնվենցիայով եւ դրան կից արձանագրություններով երաշխավորված իրավունքի նկատմամբ հարգանքի մասով որեւէ հատուկ հանգամանքի բացակայության պարագայում Դատարանը, Կոնվենցիայի 37-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն, համարում է, որ գանգատի քննությունը շարունակելն այլեւս արդարացված չէ:

Հետեւաբար գործը պետք է հանվի ցուցակից:

Այս հիմնավորմամբ Դատարանը միաձայն՝

Որոշում է գանգատը հանել գործերի ցուցակից:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2022 թվականի մայիսի 5-ին:

Վիկտորիա Մարադուդինա՝

Յոլիեն Շուկինգ՝

Քարտուղարի տեղակալի
պաշտոնակատար

Նախագահ